ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 29 » ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-35/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 14.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 14.04.2016թ. ներկայացրած բողոքով «Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) որպես բողոքի առարկա և պահանջներ նշել է հետևյալը.

ա) ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) 6-րդ չափաբաժնով ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը ամբողջական և հստակ նկարագրված չէ, որն առաջացնում է չհիմնավորված խոչընդոտներ մասնակիցների հավասար մրցակցության համար, ուստի «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2016թ. կայացրած որոշումը՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 6-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ, ինչպես նաև «Խաչպար» ՍՊԸ-ն պահանջել է Պատվիրատուի կողմից վերը նշված որոշումը համարել չեղյալ և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:

բ) Ընթացակարգի 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են օրենքի պահանջների խախտումներով գնային առաջարկներ, ուստի «Խաչպար» ՍՊԸ-ն պահանջել է մերժել նշված մասնակիցների կողմից ներկայացված հայտերը այդ չափաբաժինների մասով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը զբաղեցնող մասնակից՝ «Խաչպար» ՍՊԸ-ին:

«Խաչպար» ՍՊԸ-ն որպես բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցներ նշել է հետևյալը.

ա) 21.12.2015թ. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հայտ է ներկայացվել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգին:

12.01.2016թ.-ին «Խաչպար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում՝ որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից թիվ 6 չափաբաժնով և կից Հավելված N1՝ գների ամփոփում:

15.01.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են որակավորման փաստաթղթերը, որից հետո մոտ 1.5 ամիս Ընկերությունը որևէ տեղեկություն չի ստացել:

02.03.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը հրավիրվել է ՀՀ պաշտպանության նախարարություն՝ կնքելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/12» ծածկագրով պայմանագիրը, որի ժամանակ բանավոր հարցում է արվել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի պայմանագրի կնքման

վերաբերյալ և ստացվել է բանավոր պատասխան՝ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում ընթացակարգի պահանջներին:

Ընկերության տնօրենի խնդրանքով կայացել է հանդիպում ՀՀ ՊՆ ՌԲՎ պետի հետ, որտեղ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից տրվել են մանրամասն բացատրություններ, ներկայացվել են առաջարկվող «Դիմաքս Քլորի» համապատասխանության սերտիֆիկատները, տեխնիկական բոլոր փաստաթղթերը, տեղեկատվություն առ այն, որ տվյալ նյութը կիրառվում է ՌԴ ՊՆ-ի կարիքների համար: ՀՀ ՊՆ ՌԲՎ պետի բանավոր հանձնարարականով՝ «Դիմաքս Քլորի» նմուշ է տրամադրվել ՊՆ սանիտարական ծառայությանը՝ փորձաքննություն կատարելու և եզրակացություն տրամադրելու համար:

Մարտի 3-ից հետո մինչև մարտի 22-ը Ընկերության բոլոր փորձերը որևէ տեղեկատվություն ստանալ՝ ապարդյուն են անցել, որի պատճառով Ընկերությունը հարկադրված է եղել 23.03.2016թ. նամակով դիմել ՀՀ պաշտպանության նախարարության նախարար պարոն Ս. Օհանյանին:

04.04.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում:

05.04.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ն պատասխան գրություն է ներկայացրել՝ կցելով պայմանագրերի և դրա կատարումը հավաստող տեղեկանքների պատճենները:

11.04.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը հրավիրվել է ՊՆ՝ կնքելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16– ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/12» ծածկագրով պայմանագրի համաձայնագրերը, որի ժամանակ, ի պատասխան տնօրենի հարցմանը, կապված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ընթացակարգի արդյունքների հետ, պատասխանել են, որ Ընկերության հայտը մերժվել է, ներկայացրել են մերժումը և նրա հիմք հանդիսացող 25.03.2016թ. փորձաքննության արդյունքները, որոնց պատճենները առձեռն չեն տրամադրել, ասելով, որ կառաքեն էլեկտրոնային փոստով, ինչը սակայն մինչ օրս չեն արել (Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է Պատվիրատուից պահանջել և ստանալ այդ փաստաթղթերը):

12.04.2016թ. «Խաչպար» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում, որտեղ հայտի մերժման պատճառ են հանդիսացել՝ տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին և մասնագիտական փորձառություն չափորոշիչի

մասով անհամապատասխանությունները, որոնք Ընկերության կողմից առարկվում են հետևյալ հիմնավորումներով՝

1. Պատվիրատուի կողմից թիվ 6-րդ չափաբաժնով ներկայացված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի 1, 2 և 4 ենթակետերի պահանջներին:

Պատվիրատուն անվանացանկում նշել է «Պրեսեպտ 2,5 գ N100 կամ համարժեք», իսկ «Տեխնիկական հատկանիշներ»-ում գրված է «1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,76գ ակտիվ քլոր», որը հակասում է անգամ «Պրեսեպտ» նյութի հրահանգում սահմանված պաշտոնական դոզավորմանը, որտեղ ակտիվ քլորի համար սահմանված է թույլատրելի նորմա 1.44 - 1.76 գ. 1 հաբի լուծման ժամանակ, ինչպես նաև տրված են 10լ լուծույթ ստանալու համար՝ կախված կոնցենտրացիայից, անհրաժեշտ հաբերի քանակը, որից հստակ երևում է, որ արտադրողը իր մեկ հաբի համար հաշվարկային չափանիշ է ընդունում 1.4 գ. ակտիվ քլորը: Ըստ այդ նորմաների՝ Ընկերության կողմից առաջարկված «Դիմաքս քլորը» լիովին բավարարում է պահանջված նորմերին:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի կողմից Ընկերության ախտահանիչը ձեռք բերելու դեպքում Պատվիրատուն երեք անգամ ավելի քիչ գումար կծախսի և նույնիսկ անհրաժեշտություն չի լինի որևէ փոփոխություն կատարելու մինչ այս գործող հրահանգներում:

Պատվիրատուն իր տեխնիկական հատկանիշներում, նշելով միայն 1.76գ. ակտիվ քլորի առկայության պահանջը և ամբողջությամբ չնկարագրելով գնման առարկայի տեխնիկական բնութագրերը, առաջացրել է չհիմնավորված խոչընդոտներ հնարավոր մասնակիցների համար՝ ստեղծելով մրցակցության անհավասար պայմաններ: Ընկերությունը նշել է նաև, որ եթե Պատվիրատուն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 1-ին կետի, 2-րդ կետի 1, 2 և 4 ենթակետերի պահանջներին համապատասխան՝ կազմած լիներ տեխնիկական հատկանիշները, այնտեղ նշելով թույլատրելի նորմաները՝ 1 հաբի լուծման ժամանակ անջատվող ակտիվ քլորի քանակը սահմանելով 1.44 - 1.76 գ., ապա այդ դեպքում 25.03.2016թ. ՀՀ ՊՆ սանիտարական ծառայության փորձաքննության արդյունքները ոչ թե մերժման հիմք կլինեին, այլ հակառակը՝ «Դիմաքս քլոր»-ի համապատասխանության ապացույց, քանի որ փաստվում է, որ 1 հաբ «Դիմաքս քլոր»-ի լուծման ժամանակ անջատվում է 1.5գ ակտիվ քլոր, աշխատանքային լուծույթը

պահպանում է իր ակտիվությունը առնվազն 5 օր և ակտիվ է տարբեր վարակների հարուցիչների նկատմամբ:

2. Պատվիրատուի կողմից որպես նմանատիպ ապրանք հրավերում նշվել են ախտահանիչ նյութերը, սակայն գործող տնտեսական գործունեության տեսակների դասակարգչում որպես այդպիսին ախտահանիչ նյութերի դասակարգիչ գոյություն չունի՝ այն ներառված է քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրության դասակարգչում:

Մինչև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգում 01.04.2015թ. փոփոխությունների ուժի մեջ մտնելը՝ շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու վերաբերյալ չի եղել հստակ տարանջատում: Հաճախ տարբեր դասակարգիչների ապրանքները ներառված են եղել միևնույն պայմանագրերում և վերադաս, հսկիչ մարմինների կողմից որևէ առարկություն չեն առաջացրել:

Ընկերության կողմից ներկայացված թիվ 8 փաստաթղթերում առկա են միայն 4 կազմակերպությունների տնօրենների կողմից տրված՝ պատշաճ և ժամանակին կատարումը հավաստող տեղեկանքների պատճենները՝ ընդհանուր 111692607 /մեկ հարյուր տասնմեկ միլիոն վեց հարյուր իննսուներկու հազար վեց հարյուր յոթ/ ՀՀ դրամ գումարի: Դրանք հավաստում են, որ «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ն հանդիսանում է հուսալի և բարեխիղճ մատակարար բոլորի համար, ինչպես նաև ՀՀ ՊՆ-ի համար, որին նախորդ տարիներին կատարվել են մատակարարումներ:

բ) «Խաչպար» ՍՊԸ-ն նշել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի գների ամփոփման թիվ 1 Հավելվածով թիվ 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով «ԽԱՉՊԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները առանց ԱԱՀ-ի են, իսկ «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գները ԱԱՀ-ով են:

Ընկերությունը տեղեկացրել է, որ համաձայն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի՝ 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների իրացումը ազատվում է ԱԱՀ-ից՝ հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ն չի հաշվարկվում:

«Խաչպար» ՍՊԸ-ն նշել է նաև, որ 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների ներմուծումը ՀՀ տարածք ևս ազատված է ԱԱՀ-ից՝ համաձայն 29.06.2001թ. ուժի մեջ մտած N 195 օրենքի՝ «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին», որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Ելնելով վերոգրյալից՝ «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են օրենքի պահանջների խախտումներով գնային առաջարկներ՝ թիվ 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով, որոնք ենթակա են մերժման համաձայն Կարգի 45-րդ և 46-րդ կետերի պահանջի:

Ընկերության կողմից բերված փաստարկները ընդունելու և «Խաչպար» ՍՊԸ-ին թիվ 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հաղթող ճանաչելու դեպքում՝ Պատվիրատուին լրացուցիչ ֆինանսական ծախսերի առաջ չկանգնեցնելու նպատակով «Խաչպար» ՍՊԸ-ն պարտավորվում է նշված չափաբաժինների մատակարարումը կատարել հայտով ամենացածր գնային առաջարկ ներկայացրած «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի առանց ԱԱՀ գներով:

«Խաչպար» ՍՊԸ-ն 28.04.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին Խորհրդին է ներկայացրել նույն ընթացակարգի վերաբերյալ նոր բողոք՝ նոր պահանջներով:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.04.2016թ. թիվ ԴՎԱ/1080 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ՊՆ կարիքների համար ախտահանիչ նյութերի գնման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ներկայացված

հայտերի գնահատման արդյունքում 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչեց «Խաչպար» ՍՊԸ-ին, որին սահմանված կարգով առաջարկվեց ներկայացնել՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրեց նշված փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում պարզվեց, որ դրանցում առկա են անհամապատասխանություններ (ներկայացված են N 4 արձանագրությամբ): Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը անհամապատաս-խանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրեց փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին և համարժեք չէ դրան, բացի այդ, մասնակցի կողմից մասնագիտական փորձառության առկայությունը հավաստելու համար ներկայացված պայմանագրում որպես հրավերով նախատեսված նմանատիպ (ախտահանիչ նյութեր) ապրանք կարող էր գնահատվել միայն «Քլորամին Ճ» ապրանքատեսակը, որի ընդհանուր գինը կազմում էր ընդամենը 2,650,000 դրամ, այնինչ մասնակցի գնային առաջարկով միայն 6-րդ չափաբաժնի գինը կազմում էր 25,800,000 դրամ, այսինքն մասնակցի հայտը «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով ևս չէր համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Հաշվի առնելով նշված հանգամանքը և հիմք ընունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և 6-րդ չափաբաժնի մասով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցնող «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին: «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը որոնք հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար՝ հրավերով սահմանված պահանջներին:

«Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ների կողմից ներկյացված գնային առաջարկներում նշված ԱԱՀ-ի կապակցությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հանձնաժողովը հայտերը գնահատում է ըստ ներկայացված տվյալների, ուստի, եթե

մասնակիցը նշել է, որ տվյալ ապրանքատեսակի մասով վճարում է ԱԱՀ, ապա տվյալ փաստը ֆիքսվում է պայմանագրում և հետագա ձևակերպումները ևս կատարվում են ըստ այդմ: Անհրաժեշտ է նշել նաև, որ «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմքով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն գտնում է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելը իրավաչափ է, իսկ Ընթացակարգն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

3. <u>ԳԲԽ-35/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-35/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ՊՆ կարիքների համար ախտահանիչ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն, «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.3 կետի 1-ին ենթակետով սահմանվել են հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում ***<u>ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագրերը:</u>***

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

3. Ընթացակարգի Հրավերի N 1 հավելված տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում սահմանվել է 6-րդ չափաբաժնով՝ ***«Պրեսեպտ 2,5 գ N 100 կամ համարժեք»***, տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է ***հաբի քանակության 50%: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76 գ ակտիվ քլոր*** և այլն:

4. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-16» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 66503800 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2015թ. դեկտեմբերի 21-ին ժամը 09:30-ին կայացած նիստի արձանագրության՝

- 3.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է չհիմնացորված ցածր գնային առաջարկ:
- 4.1 կետի համաձայն՝ 12.01.2016թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Խաչպար» ՍՊԸ-ին:
- 4.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

6. Ընթացակարգի քարտուղարը էլեկտրոնային ծանուցմամբ հայտնել է, որ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Խաչպար» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է չհիմնացորված ցածր գնային առաջարկ: Ծանուցման համաձայն՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

7. «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 15.01.2016թ. ներկայացվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. «Խաչպար» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագիր, ներկայացրել է Ընկերության և ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2014թ. կնքված «ՈւԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-16» ծածկագրով ***բժշկական սարքավորումների և գործիքների գնման պայմանագիր:***

9. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով առաջարկել է՝ 6-րդ չափաբաժնով՝ «Պրեսեպտ 2.5 գ. N 100 կամ համարժեք Դիմակս քլոր 2,7 գրամ 370 հաբ», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է ***հաբի քանակության 55,5%: 1 փուփը պարունակում է 370 հաբ, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1.5 գ ակտիվ քլոր*** և այլն:

10. ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչատրյանի և ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ԲՆՏՄ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Կ. Խաչունցի մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ տրվել է հետևյալ եզրակացությունը.

«ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-9/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակից «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՊԶԲ-11/15-20» պայմանագրով մատակարարված 21 ապրանքներից քիմիական նյութ է հանդիսանում միայն 21 անվանումը՝ 85 չափաբաժնով (Քլորամին «Բ» նյութը), որի պայմանագրային գումարը կազմում է 2.650.000.0 ՀՀ դրամ: Ընթացակարգի հրավերի պահանջով մասնակցի կողմից մասնագիտական փորձառությունը հավաստելու համար անհրաժեշտ է ներկայացնել նմանատիպ պայմանագիր, որը իր գումարային արժեքով պետք է կազմի գնային առաջարկի առնվազն 50%-ը: Քանի որ, վերոհիշյալ անվանատողով նախահաշվային գումարը կազմում է 25.800.000.0 ՀՀ դրամ, մասնակիցը պետք է ներկայացներ նմանատիպ կատարված կատարված պայմանագիր առնվազն 12.900.000.0 ՀՀ դրամի չափով: Եզրակացության համաձայն՝ «Խաչպար» ՍՊԸ-ի առաջարկը չի համապատասխանում հայտարարված Ընթացակարգի մասնագիտական փորձառությունը հավաստող պայմաններին:

11. ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչատրյանի և ՀՀ ԶՈՒ ՌԲՎ ԲՆՏՄ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Կ. Խաչունցի՝ մասնակիցների որակավորման փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ եզրակացության համաձայն՝ «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-9/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 6-րդ չափաբաժնի /Պրեսեպտ 2,5 գ N 100 կամ համարժեք/-ի համար, որը ըստ տեխնիկական բնութագրի պետք է պարունակի 1 հաբը լուծելու արդյունքում պետք է անջատի 1,76 գ ակտիվ քլոր: «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Դիմակսքլոր 2,7 գ-370/հաբ/» ապրանքատեսակն անջատում է 1,5 գ ակտիվ քլոր: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված՝ «Դիմակսքլոր 2,7 գ» ապրանքատեսակը ակտիվ քլորի և հաբում ազդող նյութի քանակի՝ հրավերի պահանջներին անհամապատասխանության պատճառով համարժեք չէ պահանջվածին:

եզրակացության համար հիմք են հանդիսացել ՀՀԱԾ մասնագետների կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունները:

12. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. ապրիլի 4-ին ժամը 11:40-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գների հիմնավորումները առկա են և համապատասխանում են շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը ակտիվ քլորի և հաբում ազգող նյութի քանակի մասով չէին համապատասխանում ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պայմաններին, բացի այդ, որպես մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթուղթ, ներկայացվել էր բժշկական սարքերի և գործիքների մատակարարման պայմանագիր, այնինչ հրավերով որպես նմանատիպ սահմանվել են ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագրերը, միաժամանակ ներկայացված պայմանագիրը թերի էր. բացակայում էին համապատասխան հավելվածները, ինչպես նաև պայմանագրի կատարումն հավաստող համապատասխան փաստաթղթերը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին առաջարկել շտկելու վերը նշված անհամապատասխանությունները: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրեց փաստաթղթեր, որոնց ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը պարզել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին և համարժեք չէ դրան, բացի այդ, մասնակցի կողմից մասնագիտական փորձառության առկայությունը հավաստելու համար ներկայացված պայմանագրում որպես հրավերով նախատեսված նմանատիպ (ախտահանիչ նյութեր) ապրանք կարող էր գնահատվել միայն «Քլորամին Ճ» ապրանքատեսակը, որի ընդհանուր

գինը կազմում էր ընդամենը 2,650,000 դրամ, այնինչ մասնակցի գնային առաջարկով միայն 6-րդ չափաբաժնի գինը կազմում էր 25,800,000 դրամ, այսինքն մասնակցի հայտը «Մասնագիտական փորձառություն» չափորոշիչի մասով ևս չէր համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Հաշվի առնելով նշված հանգամանքը և հիմք ընունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը և 6-րդ չափաբաժնի մասով փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղ զբաղեցնող «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին: «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրեց պահանջվող փաստաթղթերը որոնք հանձնաժողովի կողմից գնահատվեցին բավարար՝ հրավերով սահմանված պահանջներին:

4. <u>ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 14.04.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.04.2016թ. թիվ ԴՎԱ/1080 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/15-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/10» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայ-տությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Հրավերի ամբողջական փաթեթի վերլուծությունից երևում է, որ հրավերի 1-ին մասի 2.3 կետի 1-ին ենթակետով սահմանվել է հետևյալ պահանջները.

Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (Հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանպտիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: Նմանատիպ են համարվում ***<u>ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագրերը:</u>***

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Այսպիսով, «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի հավելված N 3.1-ով, ներկայացրել է մասնագիտական փորձառության մասին հայտարարություն, որով «Խաչպար» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է «ՈՒԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-16» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 66503800 ՀՀ դրամ և պարտավորվում է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, «Խաչպար» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագիր, ներկայացրել է Ընկերության և ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2014թ. կնքված «ՈւԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-16» ծածկագրով ***բժշկական սարքավորումների և գործիքների գնման պայմանագիր:***

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 2016թ. ապրիլի 4-ին ժամը 11:40-ին կայացած նիստի արձանագրության 1.1 կետով մերժելով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ն, որպես նախկինում կատարված համանման պայմանագիր, ներկայացրել է Ընկերության և ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 06.03.2014թ. կնքված «ՈւԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/16-16» ծածկագրով ***բժշկական սարքավորումների և գործիքների գնման պայմանագիր, մինչդեռ Պատվիրատուի կողմից որպես*** նմանատիպ սահմանվել են ***ախտահանիչ նյութերի մատակարարման պայմանագրերը:*** Բացի այդ, Պատվիրատուն այս կապակցությամբ նշել է, որ Ընկերության կողմից մասնագիտական փորձառության առկայությունը հավաստելու համար ներկայացված պայմանագրում որպես հրավերով նախատեսված նմանատիպ (ախտահանիչ նյութեր) ապրանք կարող էր գնահատվել միայն «Քլորամին Ճ» ապրանքատեսակը, որի ընդհանուր գինը կազմել է ընդամենը 2,650,000 ՀՀ դրամ, այնինչ Ընկերության գնային առաջարկով միայն Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի համար ներկայացված գինը կազմել է 25,800,000 ՀՀ դրամ:

Գտնում ենք, որ այս մասով բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը,

պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, գործում առկա է մասնագիտական եզրակացություն, որի վերլուծությունից հետևում է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն առաջարկել է հրավերով պահանջվող գնման առարկային ոչ համարժեք ապրանք, մասնավորապես.

Ընթացակարգի Հրավերի N 1 հավելված տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում սահմանվել է 6-րդ չափաբաժնով՝ ***«Պրեսեպտ 2,5 գ N 100 կամ համարժեք»***, տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է ***հաբի քանակության 50%: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2,5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76 գ ակտիվ քլոր*** և այլն:

Մինչդեռ, Ընկերության կողմից որպես համարժեք ներկայացված Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով՝ «Պրեսեպտ 2.5 գ. N 100 կամ համարժեք Դիմակս քլոր 2,7 գրամ 370 հաբ», տեխնիկական հատկանիշները՝ ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրումական աղը, որը կազմում է ***հաբի քանակության 55,5%: 1 փուփը պարունակում է 370 հաբ, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1.5 գ ակտիվ քլոր*** և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ Պատվիրատուն, Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելով Ընկերության հայտը, գործել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջներին համապատասխան, ուստի այս մասով բողոքը ևս անհիմն է և ենթակա է մերժման:

3. Ինչ վերաբերում է բողոքով ներկայացրած այն պնդմանը, որ «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Ջեյ Վի Էս Մեդիմպորտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով ներկայացրած գնային առաջարկներում նշել են գումարը ԱԱՀ-ով, որով վերջիններս խախտել են «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը, քանի որ 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքների իրացումը ազատվում է ԱԱՀ-ից՝ հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ-ն չի հաշվարկվում, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևէ վերաբերելի ապացույց, այն մասին, որ Ընթացակարգի 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով նախատեսված համապատասխանաբար՝ «Պրեսեպտ 2,5 գ N 100 կամ համարժեք», «Պրեսեպտ գրանուլա 500 գրամ կամ համարժեք» և «Սայդեքս կամ համարժեք» ապրանքատեսակները համապատասխանում են 3808 94 ԱՏԳ ԱԱ դասակարգիչ ունեցող ապրանքախմբի ապրանքներին (թունաքիմիկատներ, գյուղատնտեսական մշակաբույսեր և բազմամյա տնկարկների սերմնացուներ և տնկանյութեր):

4. Անդրադառնալով բողոքով ներկայացված՝ «Խաչպար» ՍՊԸ-ին Ընթացակարգի 6-րդ, 11-րդ և 12-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչելու պահանջին՝ գտնում ենք, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, նման լիազորությամբ օժտված չէ, ուստի այս մասով բողոքը ևս ենթակա է մերժման:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ 28.04.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք, որը, ըստ էության, ոչ թե 14.04.2016թ. բողոքին ի լրումն գրություն է, այլ նոր բովանդակությամբ նոր բողոք՝ նոր պահանջներով: Ուստի 28.04.2016թ. ներկայացված բողոքը չի կարող քննվել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.04.2016թ. ներկայացրած բողոքի քննության համար ձևավորված բողոքը քննող հանձնաժողովի կողմից, առավել ևս, եթե 28.04.2016թ. ներկայացված բողոքը չի համապատասխանում Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բողոքին ներկայացվող պահանջներին:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Խաչպար» ՍՊԸ-ի 14.04.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվայան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-35/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան